16-ՐԴ ՆԻՍՏ

10 սեպտեմբերի 1918թ.

Նիստը բացվում է երեկոյան ժամը 8-ին: Նախագահում է *Ավ. Սահակյանը:*

Օրակարգի հարցերն են.

1. Պատգամավորական օրապահիկի օրենսգծի 3-րդ ընթերցումը.
2. Դպրոցական հանձնաժողովի օրենսգծի 2-րդ և 3-րդ ընթերցումը.
3. Բամբակի մոնոպոլիայի օրենսգծի քննությունը:

Պատգ. Ս. Տեր-Մարտիրոսյանը, նախքան օրենսգծի 3-րդ ընթերցման անցնելը, անում է մի քանի առարկություններ ֆրակցիաների կողմից եղած ուղղումներին: Նա հայտնում է, որ կոմիսիան օրապահիկի տեսակետի վրա է կանգնած. նա ընդունում է նաև այն տեսակետը, որ պետական պաշտոնյաները պառլամենտի անդամ լինել չեն կարող, բայց կոմիսիան գտնում է, որ կան այնպիսի հասարակական պաշտոններ, որոնք նույնպես պետք է խոչընդոտ լինեն պառլամենտի անդամ լինելու գործում. այդ պաշտոնների տեսակն ու քանակը որոշելը թողնված է իրեն՝ խորհրդին: Վիճաբանություններից հետո օրենսգիծը որոշ փոփոխություններով ընդունվում է:

Պատգ. Մուշեղյանը ըստ կարգի խոսք է խնդրում, բայց նախագահը մերժում է, պատգամավորը բողոքում է այդ երևույթի դեմ:

Հերթի է դրվում դպրոցական խնդիրը: *Պատգամավոր Տիգրանյանն* անցնում է օրենսգծի երկրորդ մասի 2-րդ ընթերցմանը: Նա հայտնում է, որ կոմիսիան մինիստրին կից եղած խորհրդի կազմի մասին չի կարողացել համաձայնության գալ. այդ առթիվ երկու կարծիք գոյություն ունի. առաջինը գտնում է, որ կոմիսիան պետք է կազմված լինի հետևյալ ձևով՝ մեկական ներկայացուցիչ ռուս և թուրք ազգ[ային] խորհուրդներից և հայկական չորս կուսակցություններից. մյուսը՝ մեկ ներկայացուցիչ սոց[իալիստ]-հեղ[ափոխական], սոց[իալ]-դեմ[ոկրատիական], Հ[այ] ժող[ովրդական] կուսակցություն[ներ]ից և 3 ներկայացուցիչ Հ. Հ. Դաշնակցությունից:

Հ. Ժ. Կ. և դաշնակցական ֆրակցիաները գտնում են, որ խորհրդի կոնստրուկցիան պետք է թողնել իրեն՝ մինիստրին:

Ֆինանսների մինիստրը գտնում է, որ այդ հարցը վերաբերում է կառավարության շտատներին: Կառավարությունը մոտերս մի օրենսգիծ է մտցնելու խորհուրդ շտատների մասին, որտեղ և կորոշվի նաև այդ խորհրդի հարցը: Նախ, որոշել որևէ մինիստրության կազմը՝ պ. Կարճիկյանը անհրաժեշտ չի գտնում:

19 ձայնով ընդդեմ 1-ի անցնում է այն առաջարկը, որով խորհրդի կոնստրուկցիան թողնվում է իրեն՝ մինիստրին:

Մյուս հոդվածները անցնում են աննշան փոփոխություններով, բացի մի հոդվածից, որը վերաբերում է խորհրդի անդամների ստանալիք ռոճիկին: Սոցիալիստ]-հ[եղափոխական]ների կողմից *պատգ. Խոնդկարյանը* պնդում է, որ այդ հարցը պետք է վճռվի հիմա և այն իմաստով, որ այդ մարմնի անդամները ոչինչ չեն ստանալու:

Պատգ. Ազատյանը գտնում է, որ այդ կետը այժմ քննության չպետք է առնվի, քանի դեռ մենք չգիտենք քանի անդամ է ունենալու, ումից է բաղկացած լինելու այդ մարմինը, և քանի անգամ շաբաթը պետք է նիստեր ունենան նրանք: Նա կարծում է, որ այդ խորհրդի անդամները պետք է վարձատրվեն. միայն այդ դեպքում նրանց աշխատանքը արդյունավետ կլինի:

Դրվում է քվեարկության և 19 ձայնով ընդդեմ 8-ի անցնում է այն առաջարկը, որ վարձատրության խնդիրը պետք է դուրս ձգվի:

Հերթի է դրվում բամբակի պետականացման խնդիրը: Զեկուցում է *պատգ. Տիգրանյանը*. Մեր երկրի հում նյութերի արտահանման պատճառով մեր առանց այն էլ խիստ աննախանձելի դրությունը կրիտիկական է դառնում: Բամբակը այդ տեսակի նյութերի մեջ կարևորներից է և պետք է միջոցներ ձեռք առնել, որ նա մնա մեր երկրում: Դրա համար անհրաժեշտ է բամբակի առևտուրը պետության մենաշնորհ հայտարարել և թույլ չտալ մասնավոր առևտրականներին՝ այդ թանկարժեք նյութը հանել մեր սահմաններից:

Պատգ. Մուշեղյանը գտնում է, որ օրենսգիծն ունի մեծ նշանակություն: Նա դառնում է դեպի աջ նստածները և ասում, որ երբ ինքը ռուսական օրիենտացիայի մասին էր խոսում, իրեն դավաճան անվանեցին, իսկ այժմ, երբ մի քանի պարոններ բամբակը ուզում են արտահանել՝ գերադասելով իրենց սեփական շահը ընդհանուրի շահից, ո՞վ է դավաճանը: Նա Ս[ոցիալիստ]-հ[եղափոխական]ների ֆրակցիայի կողմից առաջարկում է օրենքին տալ հետադարձ ուժ և զորեղացնել պատիժը:

Ֆինանսների մինիստրն ասում է, որ ինքը հնարավորություն չունեցավ այս հարցը կապել պետական ֆինանսների դրության հետ: Կառավարությունը իր տնտեսությունը կապում է մի քանի հում նյութերի մոնոպոլիայի հետ, որ այդպիսով թե՛ ներքին շուկա ստեղծի և թե՛ փոխանակության միջոցով անհրաժեշտ մթերքներ ներմուծի մեր երկիրը:

Վիճաբանությունները փակվում են և խորհուրդը անցնում է օրինագծի հոդված առ հոդված ընթերցման:

«Կառավարության լրաբեր», 13 սեպտեմբերի 1918թ.